

*Հաստատված է Մովսես Խորենացու
անվան համալսարանի
Գիտական խորհրդի N 02/004 նիստում*

«30» ապրիլի 2010թ.

Ռեկտոր՝ Ա. Ս. Աղաբաբյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մովսես Խորենացու անվան համալսարանի ուսանողական գիտական ընկերություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1 ՄԽՀ ուսանողական գիտական ընկերությունը /այսուհետ Ընկերություն/ ՄԽՀ ուսանողներին միավորող համալսարանական ստորաբաժանում է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

1.2 Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՄԽՀ և սույն կանոնադրությամբ:

1.3 Ընկերության կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են ՄԽՀ Գիտական Խորհրդի կողմից ՈՒԳԸ նախագահության /նախագահի/ ներկայացմամբ:

1.4 Ընկերությունն իր հարաբերությունները ՄԽՀ ղեկավար մարմինների հետ կարգավորում է ՄԽՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և ՄԽՀ Գիտական Խորհրդի համապատասխան որոշումներով:

1.5 Ընկերությունն իր նպատակների ու խնդիրների լուծման, երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար համագործակցում է գիտության վարչության, ուսումնական վարչության, ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի, արհմիության, ուսանողական խորհրդի և այլ կազմակերպությունների հետ՝ ելնելով փոխօգնության և համապատասխան պայմաններից և համաձայնագրերից:

1.6 Ընկերության անվանումն է հայերեն՝ Ուսանողական Գիտական Ըկերություն, ռուսերեն՝ Студенческое Научное Общество, անգլերեն՝ Student Scientific Society: Իսկ կարճ անվանումները՝ ՈՒԳ-Ը, ռուսերեն՝ СНО, անգլերեն՝ SSS:

1.7 Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Տերյան -105:

2. Ընկերության նպատակներն ու խնդիրները

2.1 Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

2.2 Ընկերության խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են.

ա/ գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,

բ/ ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական և կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում, դրանցում ընդգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,

գ/ համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և դրա մասին ինֆորմացիայի համակարգում,

դ/ ռեկտորատի հետ համաձայնեցնելով շնորհաշատ ուսանողների աջակցության ապահովում,

ե/ գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,

զ/ ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում ռեկտորատի միջնորդությամբ,

է/ այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և փոխանակում,

ը/ կապող օղակ հանդիսանալ ուսանողների և համահամալսարանական ամբիոնների միջև և նպաստել ուսանողների գիտական ծրագրերի իրականացմանը տվյալ ամբիոններում:

3. Ընկերության կառուցվածքը և ղեկավար մարմինները

3.1 Համալսարանի ՈՒԳ-Ը ձևավորվում է ռեկտորատի երաշխավորվածությամբ ներկայացված յուրաքանչյուր ֆակուլտետից առնվազն երկու ուսանողներից:

3.2 ՈՒԳ-Ը նախագահին ներկայացնում է ՈՒԳ-Ը և հաստատում է բուհի ռեկտորը: Ռեկտորի կողմից ՈՒԳ-Ը նախագահին չհաստատելու դեպքում ՈՒԳ-Ը կողմից ներկայացվում է այլ թեկնածություն:

Եթե ռեկտորի կողմից ՈՒԳ-Ը անդամներից որևէ մեկի թեկնածությունը չի հաստատվում, ապա ՈՒԳ-Ը նախագահը ընտրվում է ՈՒԳ-Ը անդամների փակ գաղտնի քվեարկությամբ և ռեկտորը պարտավոր է հաստատելու նրա թեկնածությունը:

3.3 ՄԽՀ -ի ուսանողական գիտական ընկերության գիտական խորհուրդն է, որի նիստը գումարվում է ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երկու անգամ:

3.4 ՈՒԳ-Ը - ի գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ՈՒԳ-Ը նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը:

3.5 ՈՒԳ-Ը գիտական խորհուրդը

ա/ քննարկում և որոշում է ՈՒԳ-Ը –ի գործունեության կարևորագույն ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,
բ/ առաջարկություններ է ներկայացնում ՄԽՀ Գիտական Խորհրդին,
գ/ ի գիտություն է ընդունում ՈՒԳ-Ը նախագահի հաշվետվությունը,
դ/ մշակում է ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում է և կորոզինացնում ֆակուլտետային ՈՒԳ-Ը –ների աշխատանքները և ծրագրերը,

ե/ հաստատում է իր աշխատակարգը,

զ/ ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ չսահմանված ՈՒԳ-Ը աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերվող որոշ հարցերի լուծման իրավունք,

է/ որոշում է ընդունում շնորհել ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է ընկերության անդամությանը վերաբերվող հարցեր:

3.6 ՄԽՀ ՈՒԳ-Ը գիտական խորհրդի նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան 1/2-ը: Որոշումները ընդունվում են ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Գիտական Խորհրդի արտահերթ նիստ

կարող է հրավիրվել ՈՒԳԸ նախագահի, Գլխական Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

3.7 ՈՒԳԸ գլխական խորհրդի նախագահը ի պաշտոնե ներկայացնում է ընկերությունը, համակարգում է ընկերության գլխական խորհրդի գործունեությունը, սպահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը:

3.8 ՈՒԳԸ գլխական խորհրդի նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ՄԽՀ Գլխական Խորհրդում:

3.9 ՈՒԳԸ նախագահի ՄԽՀ տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիզորությունները, համակարգում է քարտուղարության աշխատանքները և ՈՒԳԸ գլխական խորհրդի աշխատանքային օրակների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

3.10 ՈՒԳԸ գլխական խորհրդի քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները՝ առաջնորդվելով ՈՒԳԸ գլխական խորհրդի աշխատակարգով:

4. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

4.1 Ընկերության միջոցները գոյանում են ՄԽՀ բյուջեից կատարվող մասնահանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ՄԽՀ կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

4.2 Ընկերությունը անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ՄԽՀ տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

4.3 Ընկերության միջոցները օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5. Ընկերության գործունեության դադարեցման կարգը

5.1 Ըկերությունն իր գործունեությունը դադարեցնում է ՄԽՀ Գլխական Խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: